



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

05.05.2022թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 8 անդամները:

Բացակայում են Հ.Գրիգորյանը, Գ.Մելիքյանը, Ն. Վարդանյանը, Կ.Դավթյանը, Ն.Բաբայանը, Տ. Եփրեմյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Հ.Ղազանյանը, համայնքի գլխավոր խորհրդական Վ. Զիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
3. Սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
4. Քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-037-0206-0078 ծածկագրով 0,22847 հա հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -8

դեմ - 0

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Ձեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ **առաջարկում եմ**. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշման մեջ կատարել ներկայացվող փոփոխությունները և լրացումները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Սոցիալական հարուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հարկացնելու մասին:

/Ձեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Արզական գյուղի Նեղուցի փող. 26 տան բնակիչ **Հովհաննես Լևոնի Թադևոսյանի** 2022 թվականի ապրիլի 20-ի թիվ 1660-16, Չարենցավան համայնքի Արզական գյուղի Երևանի փող. 21 տան բնակիչ **Մելիք Ֆրունզիկի Աթանեսյանի** 2022 թվականի մայիսի 03-ի թիվ 1828-16 և Չարենցավան համայնքի Բջնի գյուղի 6 փող. 9 տան բնակիչ **Սարգիս Վաչագանի Խաչատրյանի** 2022 թվականի ապրիլի 27-ի թիվ 1735-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ **առաջարկում եմ**. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Հովհաննես Լևոնի Թադևոսյանին**, Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Մելիք Ֆրունզիկի Աթանեսյանին**, Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Սարգիս Վաչագանի Խաչատրյանին**,

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող հողաբարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն փախու մասին:

/Ձեկ.Ք.Բալթաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացիների կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտերը. **առաջարկում եմ**.

Սեփականության իրավունքով Ալբերտ Աֆրիկյանին պատկանող 07-019-0401-0046 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության արոտավայրի գործառնական նշանակության հողատարածքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի: Սեփականության իրավունքով Ալբերտ Աֆրիկյանին պատկանող 07-019-0014-0027 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի գործառնական նշանակության հողատարածքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի: Սեփականության իրավունքով Նորա Մաթևոսյանին պատկանող 07-008-0201-0182 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքի մի հատվածի գործառնական նշանակության հողատարածքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-037-0206-0078 ծածկագրով 0,22847 հա հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Չեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 64-րդ կետի դրույթներով և հինք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-87 եզրակացությունը. **առաջարկում եմ.** Քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-037-0206-0078 ծածկագրով 0,22847 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝

գյուղատնտեսական արտադրական հողամասի նպատակային նշանակությունը համարել փոխված որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն փախու մասին:

/Ջեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ առաջարկում եմ. Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն փախու մասին:

/Ջեկ.Հ.Ղազանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, 77-րդ հոդվածով և համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2010 թվականի հունվարի 19-ի թիվ 8-Ն որոշման, **առաջարկում եմ.**

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացու դիմումի:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Գառնիկ Ղազարյան	2-10-38	5 510 000	Սեփականություն	Անհատույց

Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10

դեմ-0

ձեռնպահ-0

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Երիցյան Գագիկ

Խլղաթյան Արսեն

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Պողոսյան Մնացական

Փանոսյան Արթուր

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Գրորադյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

